



Ավետիք Իսահակյան

Հայաստանին

Դու, երկնամերձ իմ հայրենիք, դո՛ւ, հինավուրց ի՛ն Հայաստան,
Անմահ բանի սպասարկու, խորհուրդ խորին, ի՛ն Հայաստան,
Դո՛ւ, ալևոր տեսիլների ստեղծագործ ի՛ն Հայաստան,
Եվ նոր խոսքի ավետաբեր, հազարավերք ի՛ն Հայաստան:

Սաղավարտներ դրած կանգնած քո լեռների կուռ երկաթի,
Արորներըդ արյունազանգ՝ արդարության ցորեն արտի.
Երդիկներիդ ծուխերն անուշ՝ նվիրական Նավասարդի,
Հին օրերի երգ սրբազան, սեղան գոհի, ի՛ն Հայաստան:

Քո գետերըդ՝ տեգ սուրացող, ազատատենչ, կամուրջ քանդող
Քաղաքներիդ նոխիրներից ծլած վարդերն արյուն – բուրող.
Շարականներըդ՝ հոգեբուխ, շինականիդ երգը՝ լացող.
Հին սերերի, նոր կարոտի ոսկի բամբիռ, ի՛ն Հայաստան:

Դատրիկներըդ քո փափկասուն՝ անապատի գայլերին կեր,
Որբուկներըդ՝ մերկ ու ծարավ, սովալլուկ, մահի ընկեր.
Բախտիդ վրա՝ ծափ ու ծիծաղ, սփռփանքի ունայն խոսքեր,
Նոր հույսերի, նոր երգերի երազաբույր ի՛ն Հայաստան:

Բարեկամներից վաճառված, անիրավված ի՛ն հայրենիք,
Ոսոխներիդ կրրունկի տակ ավերակված ո՛րք հայրենիք,
Սարսափներով, եղեռներով հավերժացած հի՛ն հայրենիք,
Արյունիդ մեջ սուրբ իրավունք, հոգիդ արև, ի՛ն Հայաստան:

Կրթունկները համբավ տանող պանդուխտներիդ աշխարհալած,
Նահատակված տաճարներիդ գմբեթները երկնապաց,
Մագաղաթներիդ արյունաներկ՝ ձայն հեծության, հառաչանաց,
Հրնուց ուխտի վրկայարան, ավանդատուն, ի՛նչ Հայաստան:

Ծիրանավոր քաջ – Մասիսը՝ սպարապետ քեզ պահապան,
Ծերուկները ճակատագրիդ ճամփաների սուրբ օրհնաբան,
Նոյ – Նահապետ աստվածատես՝ ածուներիդ վեհ այգեպան,
Մանուկներիդ ու կույսերիդ արյան հրնձան, ի՛նչ Հայաստան:

Արդարախոս ու մեծասքանչ քո հին լեզվով օրհներգըված,
Լուսավորչի լույս կանթեղով երկինքները լուսերանգված,
Անճառելի ու դարերի տանջանքներով հոգիացած,
Հրրաշափառ քո Հարությանք՝ նորամանուկ ի՛նչ Հայաստան:

1921

Վենետիկ